Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ֆիննական գրականություն, Արձակ, պատմվածք
13+
Ֆիններենից թարգմանեց Սվետլանա Հագերթ

Էռնո Պաասիլինա
Անտառում կորածը

Եթե մարդ է կորչում և այդ մասին ստացվում է ահազանգ, ապա նրան սկսում են փնտրել:

Եթե մոտենանք սկզբունքորեն, բոլոր մարդիկ հավասարապես թանկ են:

Հեռախոսը զանգեց՝ մարդ է կորել: «Ի՞նչ մարդ է»,— հարցնում է ոստիկանը, գրանցում է կորածի անուն-ազգանունը, լսափողը դնում է սեղանին և գնում հարևան սենյակը: «Էլի մարդ է կորել»,— հայտնում է նա գործընկերոջը: Այնքան բարձր է ասում, որ գործընկերը նույնիսկ վեր է թռչում տեղից: «Մա՞րդ է կորել:— Գործընկերը քորում է ծոծրակը:— Մի տես, Է՛: Իսկ հայտնի՞ է, թե որտեղ է կորել»:

Ցավոք, առաջին ոստիկանը ոչ մի նման տեղեկություն չունի, այդ պատճառով վերադառնում է ծառայասրահ և վերցնում խոսափողը: «Իսկ հայտնի՞ է, թե որտեղ է կորել»,— հարցնում է նա: Զանգահարողը պատասխանում է՝ անտառում, չնայած կորածը անտառին անծանոթ մարդ է, սակայն ինչ-ինչ պատճառով որոշել է գնալ հենց այդ անծանոթ անտառը:

Առաջին ոստիկանը դնում է լսափողը, նորից գնում հանգստի սենյակ և գործընկերոջը հայտնում իմացածը: Որոշ ժամանակ նրանք քննարկում են այդ թեման: Գործընկերն սկսում է խորանալ անտառի տեսության խորքերը և ի վերջո հանգում այն եզրակացության, որ որոնումներն անհրաժեշտ է սկսել հենց անտառից: «Այո՛, մենք պետք է սկսենք հենց անտառից»,— հայտարարում է նա և դարակից հանում անտառային քարտեզը: «Ի՜նչ էլ անտառ է,— զարմանում է նա,— այստեղ մոլորվել-կորչելը հեչ բան է: Ի՞նչ ես կարծում,— դիմում է նա ընկերոջը,— ո՞ր մասում կարող էր մոլորվել խեղճը, այս կեչուտո՞ւմ, թե կաղամախուտում: Դեռ, փառք Աստծո, որ այստեղ եղևնուտ չէ, քարտեզում նշված է...»:

Եվ մտքերի հոսքը երկրորդ ոստիկանին այս անգամ տանում է սեփական հուշերի թավուտները: Եթե որոշել ես զբոսնել եղևնուտում, անպայման (ինչ ասես՝ չի պատահի մարդու հետ) հաց վերցրու հետդ, ամենաճիշտը՝ բոքոնի կող. սև հացը շատ է համով: Ա՛յ, երբ ջահել էի, մի անգամ մասնակցել եմ այդպիսի որոնումների. մարդ էր կորել ու դարձյալ եղևնու

խուլ անտառում: Շներով էին ման գալիս, նույնիսկ պայծառատես-էքստրասենս էին վերցրել հետները: Բայց դե եղևնուտը՝ շամպայնի շիշ, իսկ կորածը խցան չէ, որ հեշտուհանգիստ հանես: Էդպես էլ չգտան, գնաց ու կորավ խեղճ մարդը...

Մյուս առավոտյան ոստիկանները կողպեցին բաժանմունքի դռները, նստեցին հեծանիվները և ուղղվեցին դեպի անտառ: Նրանք պարզ պատկերացնում էին իրենց անելիքը: Անտառի եզրին իջան հին, ճռճռան հեծանիվներից և պատրաստվեցին գործողությունների առաջին փուլին: Մինչ առաջինը հեռվից զննում էր անտառը, մյուսը սուրճ եփեց: Հետո սուրճ եփողը քննախույզ հայացքն ուղղեց դեպի անտառի խորքերը, իսկ առաջինը վարպետորեն բուտերբրոդներ պատրաստեց:

— Զարմանալի բան է,— սկսեց բարձրաձայն մտորել քննախույզ հայացք ունեցողը,— ի՞նչ են մտածում էդ մարդիկ, որ հենց այնպես ելնում-գնում են անտառ: Բա անտառին կարելի՞ է անլուրջ վերաբերվել: Նույն հաջողությամբ կարող ես կյանքիդ վերջ տալ ցանկացած այլ տեղում, առանց ուրիշներին նեղություն պատճառելու...

Մասամբ վերականգնելով ուժերը նրանք պատրաստվեցին մտնել անտառ: Ուսապարկից հանեցին բարակ քուղի կծիկը, մի ծայրը ամուր կապեցին անտառեզրի ծառերից մեկի բնին և խորացան: Ժամանակ առ ժամանակ, հավելյալ ապահովության համար, կացնով հետք էին թողնում ծառերի բներին՝ մարդ ես, բա որ քուղը կտրվի՞: Թեև այնքան ամուր էր, որ երևի հնարավոր լիներ միայն կացնով կտրել:

«Հե՛յ, որտե՞ղ ես, դո՛ւրս արի,— կանչում էին նրանք:— Դու՛րս արի, ձա՛յն հանիր, ա՛յ մարդ, մենք քեզ ոչինչ չենք անի»:

Մի երկու րոպե գոռալ-կանչելուց հետո կանգ էին առնում ու որոշ ժամանակ ականջ դնում՝ պատասխան չկա՞: Ամեն կես կիլոմետրը մեկ ուսապարկից նոր կծիկ էին հանում ու կապում նախորդի ծայրին:

Օրվա երկրորդ կեսին դուրս եկան անտառային փոքրիկ լճակի ափը: Ճողփում էին ձկները, և օղակները տարածվում էին մակերեսով մեկ: Շուրջբոլորը հանդարտ լռություն էր, թվում էր՝ բնությունն էլ է լռել և ունկնդրում է ինքն իրեն: Ոստիկաններից մեկը ուսապարկից հանեց անհրաժեշտ պարագաները և արագորեն մի քանի ձուկ որսաց: Երկրորդը խարույկ վառեց, և երկուսով տապակեցին ձուկը:

— Եթե խորը մտածես,— մատները լպստելով՝ սկսում է դատողություններ անել ոստիկանների մեկը,— ապա վտանգը կարող է դարանակալած լինել ամենուր: Վերցնենք թեկուզ ջուրը: Ուղղակի զարմանալի է, թե որքան քիչ ջուր է պետք, որ մարդը խեղդվի՝ մի փոքրիկ ջրավազան, քսան-երեսուն սանտիմետր խորությամբ... Մեկ-մեկ միտք եմ անում՝ կարո՞ղ է, մարդը ինչ-որ կերպ զգում է իր ճակատագիրը, բայց դե, տես, այնուամենայնիվ, գնում է սեփական կորստյանն ընդառաջ...

— Չէ հա,— արձագանքում է գործընկերը:

Ակնհայտորեն նրան հետաքրքրում է այդ թեման: Սակայն, ափսոս, երկար-բարակ խոսակցությունների ժամանակը չէ: Հարկավոր է շարունակել որոնումները: «Հե՛յ, մարդ Աստծո, ո՞ւր ես, արձագանքի՛ր»: Ոստիկանները նորից մի քանի րոպե ականջ են դնում: Ձայն չկա: «Հե՛յ, ե՛կ այստեղ, կորած-մոլորված»: Լռություն: Ոստիկանները տարակուսանքով նայում են լճակի դիմացի ափին: Այն ծածկված է մացառներով և խիտ, մարդաբոյ խոտով: Մոլորվել կարելի է... ընդամենը մի կծիկ քուղ է մնացել, այս անտեր աշնանային օրն էլ այնքան կարճ է... Ինչ լավ է, որ գոնե երկուսով են, խոսում են իրար հետ: Մյուս ափը խուզարկելն իսկապես իմաստ չունի:

Նրանք հավաքում են ուտելիքի մնացորդը, լցնում ուսապարկը և անշտապ բռնում ետդարձի ճամփան: Առանձնապես տրամադրություն չունեն՝ բախտը չժպտաց: Հասնում են անտառի եզրը, քուղն արձակում ծառի բնից:

Ոստիկաններից մեկն սկսում է փչել հեծանիվի անիվը, մյուսը հավաքում ու այրում է թղթի կտորտանքն ու սննդի մնացորդը: Հետո հերթով մտնում են թփերի մեջ. բնական կարիք է, ի՞նչ պիտի անես, հո մինչև տուն չես դիմանալու...

Երկուսով երկար նայում են անտառին, որն արդեն կամաց-կամաց ընկղմվում է մթության մեջ: Անտառ է ու անտառ, նույնիսկ վտանգավոր չի թվում:

Բայց, դե, գնաց-կորավ խեղճ մարդը...